

Հարություն Մաթևոսյան¹

**ԱՄՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱԼ-ԿԱԻԴԱՅԻ»-Ի ՆԿԱՏԱՄԱՐ 2001
ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ՄԻՆԶԵՎ 2002 ԹԹ.**

Բանալի բառեր՝ ահաբեկչություն, ալ-Կաիդա, բեն Լադեն, ԱՄՆ, Թալիբան,

20-րդ դարի վերջին «ալ-Կաիդա»² կազմակերպության ղեկավար Ուսամա բեն Լադենի կողմից հայտարարված ջիհադը բնորոշում է ԱՄՆ-ի և նրա ժողովրդի փոխեց ամերիկյան իշխանությունների քաղաքականությունը ահաբեկչության դեմ պայքարում: Ջիհադի հայտարարման պահից սկսած, բեն Լադենը և իր ղեկավարած ահաբեկչական խմբավորումը, իրականացրեցին մի շարք գործողություններ, որոնք փոխեցին Միացյալ Նահանգների քաղաքականությունը տարածաշրջանում: Հատկապես սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած իրադարձությունները փոխեցին միջազգային հանրության վերաբերմունքը ահաբեկչության նկատմամբ, քանզի այս ժամանակահատվածից սկսած, միջազգային հանրության առաջ ի հայտ եկավ մի նոր թշնամի՝ միջազգային ահաբեկչությունը, որը, իհարկե, նոր չէր, սակայն այն սկսեց ավելի մեծ բնույթ ստանալ 20-րդ դարի վերջին: 2001 թ. սեպտեմբերից փոխվեց ԱՄՆ-ի մարտավարությունը բեն Լադենի և նրա ղեկավարած կազմակերպության նկատմամբ: Սկսվեց թիրախային, ռազմական բնույթի պայքար, ինչի հետևանքով Միացյալ Նահանգների ռազմական ուժերը ներխուժեցին ահաբեկչության աջակցող տարբեր շրջաններ՝ փորձելով այդ տարածքները ազատել ահաբեկիչների տիրապետումից:

Փաստացի 2001 թ. սեպտեմբերը շրջադարձային եղավ ամերիկյան իշխանությունների համար: Այլևս անհնար էր դիվանագիտական պայքար մղել ահաբեկիչների դեմ, այն պետք էր վերաներ ռազմական գործողությունների: Մինչ այդ ԱՄՆ-ն չուներ միջազգային հանրության բացահայտ աջակցությունը ահաբեկչության դեմ կոշտ պայքար մղելու համար: Նյու Յորքում և ԱՄՆ մյուս շրջաններում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները կանաչ լույս հանդիսացան ռազմական գործողություններ սկսելու համար:

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի ուսանող, էլ. փոստ՝ harutmatevosyan9@gmail.com

² «Ալ-Կաիդա» ծայրահեղ-արմատական ահաբեկչական կազմակերպություն, ստեղծվել է 1988 թվականին Ուսամա բեն Լադենի և մի քանի այլ ծայրահեղականների կողմից:

2001 թ. սեպտեմբերը բավականին քառասային իրավիճակ էր ստեղծել Միացյալ Նահանգների իշխանության բարձր էշերոններում և հատկապես հասարակ քաղաքացիների շրջանում: Ահաբեկչություններից հետո շուրջ երեք ժամ տեղի էր ունենում իշխանության վակուում: Միայն երեկոյան նախագահ Բուշը հանդես եկավ տեսաուղերձով ուղղված Միացյալ Նահանգների ժողովրդին³: Սակայն կարևոր էր այն՝ ինչ տեղի էր ունենում Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում՝ Սպիտակ տանը:

Նախագահ Բուշը իր օրագրում⁴ գրում է, որ ահաբեկչության իրականացումից հետո խորհրդակցության ժամանակ արդեն պարզ էր, որ այդ ահաբեկչության հեղինակը Ուսամա բեն Լադենն էր՝ «ալ-Կաիդա» ահաբեկչական կազմակերպության առաջնորդը: Այս իրադարձություններից բույներ անց, անվտանգության նկատառումներից ելնելով, նախագահ Բուշը ինքնաթիռով պատարաստվում է թռիչքի, իսկ ավելի կոնկրետ տեղափոխվում է Ամերիկայի հյուսիս՝ մեկ գաղտնի բազայից մեկ այլ ստորգետնյա բունկեր, քանզի ամերիկյան հատուկ ծառայությունները կանխատեսում էին հավանական հարձակում նախագահական ինքնաթիռի վրա: Արդեն ուշ երեկոյան Բուշը վերադառնում է գաղտնի ռազմաբազա, որը գտնվում էր Վաշինգտոնի մոտակայքում⁵: «Նուազա ժամերի ընթացքում նախագահ Բուշը ստանում էր տարբեր զեկուցագրեր, որտեղ փաստացի ներկայացվում էր «ալ-Կաիդա»-ի կապը այս ահաբեկչության հետ:

Այնպես էր, որ Միացյալ Նահանգները պատրաստվում է ռազմական միջամտությունն իրականացնել տարածաշրջանում: Ռազմական գործողությունների սկսման համար անհրաժեշտ էր համոզել արաբական, իսլամական երկրներին դադարեցնել իրենց աջակցությունը տեղի ահաբեկչական խմբավորումներին: Ինչպես նշվում է հուշագրերից մեկում, նախագահը այդ խորհրդակցություններից մեկում ասում է. «Մենք ստիպված ենք այդ երկրներին ստիպել ընտրություն կատարել»⁶, այսինքն այստեղ խոսքը այն մասին էր, որ երկրների ղեկավարությունը պիտի ընտրություն կատարեին կամ աջակցելու ահաբեկչությանը կամ պայքար սկսեին ահաբեկչության դեմ: Պատահական չէր նաև այն, որ նախագահ Բուշը երեկոյան իր ելույթի ընթացքում հայտարարեց, որ իրենք չեն տեսնում որևէ տարբերություն այն ահաբեկիչների, ովքեր

³ Նախագահ Բուշի տեսաուղերձը ԱՄՆ քաղաքացիներին՝

<https://www.youtube.com/watch?v=rGwxw4tUzlo>

⁴ John Miller., Michael Stone., Chris Mitchel ., The Cell ., New York, 2003, p. 138.

⁵ 9/11 Commission report, p. 327-329.

⁶ Jane Corbin, Al Qaeda, In search of the Terror Network that Threatens the World, 2002, p. 245.

իրականացրել էին այդ և նրանց միջև, ովքեր աջակցում են այդ ահաբեկիչներին: Հետագայում սա պիտի հիմք հանդիսանար այն քաղաքականության իրականացմանը, որը նորություն մտցրեց ԱՄՆ-ի գործողությունների մեջ: Այս դոկտրինի գլխավոր սկզբունքը հետևյալն էր. դաշնակիցների հետ կամ առանց նրանց, ընդգրկում, երկարաժամկետ պատերազմ ահաբեկչության դեմ, որը պիտի տեղի ունենար թշնամու տարածքի «պրտում»: Հաջորդ ժամերին սկսեցին տարբեր հանդիպումներ տեղի ունենալ ԱՄՆ ղեկավարության Պակիստանի դեսպանի հետ, հատուկ ծառայությունների հետ⁷:

«Ալ-Կաիդա»-ի դեմ գործողությունները արդեն նոր թափ ստացան ահաբեկչության հենց հաջորդ օրերին: Սեպտեմբերի 12-ի առավոտյան ԿՀՎ ղեկավարը⁸ Բուշին զեկուցեց մի քանի փաստեր, որոնք վկայում էին «ալ-Կաիդա»-ի կողմից այն կազմակերպելու մասին և նրա մասին, որ այն շարունակում է մեծ սպառնալիք հանդիսանալ ԱՄՆ-ի համար: ԿՀՎ ղեկավարը հանդես եկավ նաև հայտարարությամբ, որով խոստանում էր, որ այս ահաբեկչության կազմակերպիչները այլևս չեն կարող իրենց ապահով զգան աշխարհի ցանկացած վայրում⁹: Իսկ այս ընթացքում շատերը կարծում էին, որ առաջին հարվածները դեռ սկիզբն էին և հատուկ ծառայությունները ունեին տվյալներ, որ հաջորդ հարվածը լինելու էր ԱՄՆ Կոնգրես վրա: Արդեն ԱՄՆ ռազմական ղեկավարությունը ղեկավարությունը սկսեց ծրագրել տարբեր միջոցառումներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ չեզոքացնել «ալ-Կաիդա»-ին և հասնել բեն Լադենին:

Այս ընթացքում քննարկվում էր տարբեր օպերացիաներ, և որ այդ ռազմական բախումների հետևանքով Աֆղանստանը դառնալու էր պատերազմի թատերաբեմ հակամարտող կողմերի միջև, իսկ Միացյալ Նահանգները իր և դաշնակից ուժերին հավաքելու էր մեկ հրամանատարության ներքո: Այս գործողություններում ներառվելու էին նաև ՆԱՏՕ-ի հրամանատարությունը, որոնց աջակցությունը տարածաշրջանում բավականին կարևոր էր ԱՄՆ զինված ուժերի համար թե՛ հոգեբանորեն և թե՛ ռազմական առումով: Նրանք կարծում էին, որ այստեղ հնարավոր է հավաքել շուրջ 20 հազար զինվորների՝ օգտագործելով նաև դաշնակիցների մարդկային ռեսուրսները:

⁷ AAL transcript, telephone call from Nancy Wyatt to Ray Howland, Sept. 11, 2001; Michael Woodward inter-view (Jan. 25, 2004).

⁸ Դեռևս 1997 թ.-ից այս պաշտոնում էր զտնվում Ջորջ Թենեթը, ում հետագա ղեկավարումը համակարգում լուրջ քննադատությունների արժանացավ:

⁹ https://www.cia.gov/news-information/speeches-testimony/2001/dci_speech_09122001.html

Հոկտեմբերին սկսվեցին առաջին ավիահարվածները Աֆղանստանում: Հոկտեմբերի 7-ին ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիոն ռազմաօդային ուժերը հարվածներ են հասցնում «ալ-Կաիդա»-ի և Թալիբանի¹⁰ ռազմական կենտրոններին¹¹: Այս կոալիցիոն ուժերը իրենց մեջ ներառում են Ֆրանսիան, Կանադան, Ավստրալիան, ՆԱՏՕ-ի մի շարք երկրներ և այլն: Այս հարվածներից ամենաշատը թուլանում էին Թալիբանի դիրքերը Աֆղանստանում, սակայն նրանք լավ հասկանում էին այն գիճը, որը պիտի վճարեին բեն Լադենին Աֆղանստան թողնելու դիմաց: Արդեն ռազմաօդային հարվածների առաջին օրերին զոհվեցին հազարավոր աֆղանցիներ, իսկ ամերիկյան ուժերը նախապատրաստվում էին ցամաքային հարձակման, որը ուղղակիորեն կթուլացներ Աֆղանստանում Թալիբանի դիրքերը:

Բեն Լադենը ևս հասկանում էր այս խնդրի լրջությունը և նա սկսեց կիրառել տեղեկատվական պատերազմ ընդդեմ ԱՄՆ-ի: Նախ Բեն Լադենը սկսեց ինտենսիվորեն հանդես գալ տեսաուղերձներով, որով կոչ էր անում մուսուլմաններին, որտեղ էլ որ լինեն, պայքարեն իրենց կրոնի համար¹²: Այս ուղերձները շարունակվում էին հրապարակվել ալ-Ջազիրա հեռուստալիքով: Կոչ արվեց մուսուլմանական ումմային դուրս գալ պայքարի ընդդեմ ԱՄՆ-ի և նրա միջազգային դաշնակիցների: Իրականում այստեղ «ալ-Կաիդա»-ի պլանները լիովին այլ էին, քանզի նրանք հույս ունեին, որ սեպտեմբերյան հարձակումները կդառնան նախադեպ, և սրան ավելացնելով այս կոչերը, հնարավոր կլիներ տեղային հարձակումներ սկսել առանց կենտրոնական ղեկավարության հետ համապատասխանեցնելու, որը ԱՄՆ ողջ տարածքում քառսի կբերեր: Սակայն բեն Լադենին դա չհաջողվեց և դա բերեց խորը հիասթափության հենց «ալ-Կաիդա»-ի ներսում:

Մրան զուգահեռ Բուշի վարչակազմը ևս ակտիվ տեղեկատվական պատերազմ էր իրականացնում: Նրանք սկսեցին ճնշումներ կիրառել Կատարի իշխանությունների նկատմամբ, որպեսզի իրենց գլխավոր հեռուստալիքը՝ ալ-Ջազիրան, դադարեցնի հեռարձակել այն տեսաուղերձները, որոնք գալիս էին «ալ-Կաիդա»-ից, քանզի ամերիկյան հասուկ ծառայությունները կարծում էին, որ այդ ուղերձները կարող են պարունակել կողեր, ենթատեքստեր, որոնց միջոցով մեսսիջներ կգնան

¹⁰ Թալիբան՝ իսլամական շարժում, որ սկիզբ է առել Աֆղանստանում՝ աֆղանների շրջանում 1994 թվականին, ղեկավարել Աֆղանստանը 1996-2001 թվականներին («Աֆղանստան Իսլամական Էմիրաթ») և Պակիստանի հյուսիսը:

¹¹ <https://www.history.com/this-day-in-history/u-s-led-attack-on-afghanistan-begins>

¹² Brad k. Berner., Jihad: Bin Laden in His Own Words : Declaratations, Interviews, and Speeches, 2006, p. 93.

ամերիկյան կամ եվրոպական ահաբեկչական ցանցերին և նոր ահաբեկչությունների ալիք կսկսվի:

ԱՄՆ-ն ի վերջո անցավ կտրուկ գործողությունների. Քարույում, ալ-Ջազիրայի խմբագրությունը ռմբակոծվեց երկու անգամ ամերիկյան ռազմաօդային ուժերի կողմից, որի պատճառով ստիպված էր ողջ անձնակազմը դուրս գալ Քարույից և այլևս տեղում չուսարանել «ալ-Կաիդա»-ին¹³: Այս գործողությունները սկսեցին ավելի լայնամասշտաբ բնույթ կրել, որի հետևանքով վիրավորվում կամ զոհվում էին հազարավոր աֆղանցիներ:

Ռազմական գործողությունները սկսեցին տալ իրենց առաջին արդյունքները: Սպանվեց «ալ-Կաիդա»-ի երեք առաջնորդներից մեկը՝ Մուհամմադ Աթեֆը ամերիկյան ռազմաօդային հարձակումների արդյունքում, այն ժամանակ, երբ «ալ-Կաիդա»-ի ներկայացուցիչները հավաքվել էին հանդիպման¹⁴: Այս եզիպտացիներն Լադենի հետ էր դեռևս 1980-ականներից: Նա առաջիններից, ով մշակել էր հարձակումները դեռևս Արևելյան Աֆրիկայում և նա ուներ ռազմական ճամբարներ Աֆղանստանում: Պատահական չէր նաև այն, որ Մուհամմադ Աթեֆի մահից հետո Յունիս Իսանը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշում էր, որ ամերիկացիները կարող են ռմբակոծել այն, ինչ ուզում էին, սակայն նրանք երբեք չեն կարող բռնել Ուսամա բեն Լադենին¹⁵: Այս դեպքերից հետո բեն Լադենը իր անվտանգության նկատառումների ելնելով տեղափոխվում է Թորա Բորա¹⁶, որը ժամանակին ամենավտանգավոր տեղերից մեկն էր աշխարհում: Նոյեմբերին կրած պարտությունից հետո այստեղ էին տեղափոխվել Ուսամա բեն Լադենը և նրա զինակիցները: Ամերիկյան գաղտնի տվյալների հաղորդմամբ, այստեղ պարբերաբար տեղի էին ունենում հանդիպումներ, ուր քննարկվում էին հետագա ահաբեկչությունների իրականացումը Եվրոպայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

2001 թ. վերջին «ալ-Կաիդա»-ի մարտիկները շարունակում էին իրենց տիրապետության տակ պահել Թորա Բորայի շրջանը: 2001 թ. դեկտեմբերի 3-ին ամերիկյան հատուկ ծառայությունների խումբը ուղղաթիռի միջոցով ներխուժում է Ջալալաբադ՝ Աֆղանստան՝ սկսելու

¹³ Jane Corbin, Al Qaeda, In search of the Terror Network that Threatens the World, 2002, p. 253.

¹⁴ Ըստ տարբեր տեղեկությունների՝ Աթեֆը սպանվել է 2001 թ. նոյեմբերի 14-16 ընկած ժամանակահատվածում ԱՄՆ ռազմաօդային հարվածների հետևանքով:

¹⁵ Jane Corbin, Al Qaeda, In search of the Terror Network that Threatens the World, 2002, p. 253.

¹⁶ Այն իրենից ներկայացնում էր քարանձավային մի շրջան, որը տեղակայված էր Աֆղանստանի արևելյան հատվածում, նշվում է, որ այստեղ էր գտնվում «ալ-Կաիդա»-ի և Թալիբանի կարևորագույն ճամբարները:

ռազմական օպերացիան: Սկզբանական հաստատումն հնարավոր է դառնում «ալ-Կաիդա»-ի մարտիկներից ազատագրել ավելի ցածր հաստիքներում գտնվող քարանձավները: Տալով մոտավոր նշանակետեր, որտեղ գտնվում են «ալ-Կաիդա»-ի հիմնական ռազմաբազաները՝ ամերիկյան գաղտնի ծառայությունները ռմբակոծեցին այդ թիրախները: 72 ժամ շարունակ ամերիկյան ռազմաօդային ուժերը ակտիվ ռմբակոծում էին շրջանը: Այդ ժամանակ «ալ-Կաիդա»-ի մարտիկները ստիպված էին նահանջել ավելի բարձր դիրքերից և զիջել կարևոր շրջաններ¹⁷:

Հետագայում ամերիկյան գաղտնի ծառայություններին միացան բրիտանական ուժերը և օդային հարվածներ տալով «ալ-Կաիդա»-ին՝ ստիպեցին նահանջել: Արդեն ընդունելով իրենց մոտալուստ պարտությունը՝ «ալ-Կաիդա»-ն սկսեց բանակցություններ վարել տեղի ամերիկյան զինվորական հրամանատարության հետ, որպեսզի իրենց ժամանակ տան զենքերը վայր դնելու համար: Սակայն շատ վերլուծաբաններ կարծում էին, որ սա իրական ժամանակն էր, երբ դեկավար կազմը՝ ի դեմս Ուսամա բեն Լադենի, պիտի անվտանգ հեռանար շրջանից: Բանակցությունները անցան ապարդյուն և դեկտեմբերի 12-ին վերսկսեցին մարտերը. պարզ դարձավ, որ ահաբեկիչները ժամանակ էին շահում, որպեսզի հիմնական ուժերը դուրս գային Սալիտակ լեռներով¹⁸: Սկսվեց նորանոր հարձակումներ արդեն հարակից շրջանների վրա, սակայն ապարդյուն: Միացյալ Նահանգները շարունակում էին իրենց ուշադրությունը դարձնել Թորա Բորայի վրա՝ այստեղ կենտրոնացնելով ավելի քան 2000 զինվորներ: Իրականում այս ամենի արդյունքը դարձավ գտնված մի քանի ռազմական ճամբարներն, որոնք ամերիկյան լրատվամիջոցների համար համարվում էր արժեքավոր¹⁹:

2001 թ. դեկտեմբերին վերջին քարանձավը վերցված էր, իսկ ահաբեկիչները փախուստի էին դիմել: Ամերիկյան հատուկ ծառայությունները շարունակում էին որոնումները հունվարին այդ տարածքում, սակայն չկար որևէ հետք բեն Լադենի կամ «ալ-Կաիդա»-ի դեկավարներից որևէ մեկի: Հետագայում ամերիկյան ԿՀՎ դեկավարը հայտնում է, որ բեն Լադենը հեռացել է դեպի Փարսչինար: Նա կարծում

¹⁷ Biddle Stephen D. *Afghanistan and the Future of Warfare Implications for Army and Defense Policy*. Carlisle, PA: Strategic Studies Institute, U.S. Army War College, 2002.

¹⁸ Ահաբեկիչները բեն Լադենի գլխավորությամբ կարողացան Սալիտակ լեռներով տեղափոխվել պակիստանյան ինչ-որ խմբերի տիրապետության տակ գտնվող տարածք, որոնք իրենց սոլիդարություն էին հայտնել բեն Լադենին և նրա սպանվելու շանսերը այստեղ ավելի քիչ էին:

¹⁹ Matthew Forney "Inside the Tora Bora Caves". *Time magazine*, 2001.

էր, որ հնարավոր էր բռնել բեն Լադենին, եթէ ամերիկյան ուժերը պատերազմի սկզբում ավելի շատ լինէին Աֆղանստանում: Հետագայում ներքին փաստաթղթերից պարզ է դառնում, որ ԿՀՎ ղեկավարը պահանջել է ավելի քան 1000 զինվոր, սակայն այդ թիվը նրանց չի տրամադրվել²⁰: Թորա Բորայից անմիջապէս հետո ամերիկյան ուժերը վերակազմավորվեցին Աֆղանստանում: Սակայն «ալ-Կաիդա»-ն և Թալիբանը չէին հանձնվում և ծայտված շարունակում էին իրենց գործունեությունը:

Ամերիկյան գործողությունները Աֆղանստանում բերեց որոշակի առումով հակաամերիկյան շարժման ձևավորմանը: Աֆղանստանում սկսվեց հակաամերիկյան ռազմական միավորումների ձևավորումը, որոնց թիվը անցնում էր մոտավորապէս 1000-ը: Իսկ ամերիկյան ուժերը հաստատվել էին Զարույում՝ օգտագործելով տեղի ռազմական միջոցները: Ամերիկյան ուժերի թիվը Աֆղանստանում հասավ մոտավորապէս 10000-ի Թալիբանի և «ալ-Կաիդա»-ի ակտիվ ջանքերի հետևանքով: 2001 թ. դեկտեմբերի ՄԱԿ-ը ընդունեց 1378 բանաձևը կապված Թալիբան ռեժիմին Աֆղանստանից հեռացնելու վերաբերյալ²¹:

2001 թ. վերջին ամերիկյան հատուկ ծառայությունները շարունակում էին ոմբակոծել «ալ-Կաիդա»-ի դիրքերը Աֆղանստանում: Հաշվի առնելով դեկտեմբերյան տոների ակտիվ շրջանը՝ հատուկ ծառայությունները շարունակում էին ենթադրել մոտալուտ հարձակումների մասին: Դեռևս դեկտեմբերին շարունակում էին ստանալ տարբեր ահազանգեր ահաբեկչությունների իրականացման վերաբերյալ, դրանցից մի մասը լինում էին կեղծ, սակայն շատերը լինում էին ճշգրիտ և հատուկ ծառայություններ կարողանում էին կանխել ահաբեկչությունների նոր փորձերը:

Ինչ վերաբերում է ամերիկյան հետագա գործողություններին, ապա դրանք միմիայն գոհերի թիվն էին ավելացնում խաղաղ բնակչության շրջանում: Ամերիկյան ռազմական ուժերը արդեն երեք ամիս շարունակ բացահայտ պատերազմ էին սկսել ընդդէմ «ալ-Կաիդա»-ի, հատկապէս ամերիկյան օդուժը մեկը մյուսի հետևից ոմբակոծում էր թշնամու ճամբարները, սակայն այս ոմբակոծություններից առավելապէս գոհվում էին կանայք և երեխաներ: Իսկ Միացյալ Նահանգների այսպիսի քաղաքականության շարունակությունը կարող էր բերել էլ ավելի մեծ թվով գոհերի խաղաղ բնակչության շրջանում: Իսկ ինչ վերաբերում է «ալ-Կաիդա»-ին, ապա նրանք չէին մտածում իրենց պայքարը

²⁰ Gary Berntsen, Jawbreaker: The attack on bin Laden and al-Qaeda, Three Rivers Press, December 24, 2006

²¹ Տե՛ս , "UN Security Council resolution 1378 (2001)". *United Nations*.

դադարեցնելու մասին, շարունակում էին բանակցել տեղի մի շարք ուժերի հետ որոշակի աջակցություն ստանալու համար, սակայն միևնույն ժամանակ նրանք նաև հասկանում էին, որ այլևս անհնար է գնալ դեմ առ դեմ պայքարի դաշնակից ուժերի դեմ: Նրանք սրան զուգահեռ շարունակում էին իրենց ցանցի ընդլայնումը իրականացնել Եվրոպայում և այլուր²²:

Ամերիկյան ղեկավարությունը արդեն հետագայում, հասկանալով, որ այժմ այլևս հնարավոր չէ բռնել բեն Լադենին սկսեց մեկը մյուսի հետևից տարբեր հայտարարություններ անել կապված բեն Լադենի հետ: Օրինակ, նախագահ Բուշը նշում էր, որ այլևս ուշադրություն չի դարձնում այդ մարդու որոնումներին, քանզի ահաբեկչությունը ավելին է քան մի մարդը²³: Բեն Լադենի որոնման հարցը դժգոհություն էր առաջացնում նաև Բուշի վարչակազմում: Կային մի խումբ մարդիկ՝ ի դեմս Սենատի նախագահ Թոմ Դաշլի, ով կարևորում էր Ուսամա բեն Լադենին ոչնչացնելը և նշել էր նախագահ Բուշի մոտ, որ բեն Լադենը շուտափույթ պետք է գտնվի: Այս ընթացքում յուրեր էին տարածվում, որ Բեն Լադենը տեղափոխվել է Չեչնիա, յուրեր կային, որ Թորա Բորայի հայտնի մարտերից հետո նա ծանր վիրավորված հեռացել է երկրից, սակայն այս ողջ ընթացքում նա շարունակում էր գտնվել Աֆղանստանի հարավային հատվածներում: Ինչ վերաբերում էր նրա ընտանիքին, ապա նրանք շարունակվում էին գտնվել Սաուդյան Արաբիայում, սակայն նրանք նույնպես տեղյակ չէին բեն Լադենը կենդանի է թե մահացել է: Հետագայում տեղեկություններ ստացվում են տարբեր նամակներից, որոնք նա ուղարկում էր իր ընտանիքի անդամներին, որոնցից մեկում գրում է , որ երբեք նրան չեն կարող գտնել և շուտով կլի հիանալի նորություններ²⁴: Ծատերը սկսեցին կարծել, որ տեղի են ունենալու նոր հարձակումներ «ալ-Կաիդա»-ի մարտիկների կողմից, սակայն ամենաշատը վախեցնում էր այն, որ բեն Լադենը կարող էր իրականացնել միջուկային հարձակումներ:

Այսպիսով, ամերիկյան գործողությունները 2001 թ. սեպտեմբերից մինչև 2002 թ. ձախողման էին մատնված մի քանի հիմնական պատճառներով. նախ՝ ամերիկյան իշխանությունները նպատակ էին դրել ոչնչացնել հենց բեն Լադենին, այլ ոչ «ալ-Կաիդա»-ն որպես ռազմական խմբավորում, ինչը, սակայն, չհաջողվեց: Նրանք այդպես էլ

²² «ալ-Կաիդա»-ն շարունակում էր իր որդեգրած քաղաքականությունը: Այն արդեն ուներ իր ճյուղերը աշխարհի տարբեր հատվածներում և նրանք ոչ միայն սպառնալիք էին հանդես գալիս Միացյալ Նահանգների համար, այլ նաև ողջ աշխարհի:

²³ Jane Corbin, Al Qaeda, In search of the Terror Network that Threatens the World, 2002, p. 301.

²⁴ <https://www.irishtimes.com/news/bin-laden-phonned-mother-on-eve-of-attack-report-1.398702>

չկարողացան կասեցնել «ալ-Կաիդա»-ի ցանցերի ընդլայնումը Եվրոպայում և ողջ աշխարհում, քանզի ահաբեկչությունների իրականացման հնարավորությունները կտրուկ մեծացել են: Ռազմական ուժերը չկարողացան «ալ-Կաիդա»-ին որպես ահաբեկչական կազմակերպության ոչնչացնել, ինչը հետագայում պիտի հանգեցնեի նոր ահաբեկչությունների իրականացմանը: Միացյալ Նահանգների նոր մարտավարությունը չբերեց սպասվող արդյունքներ, ինչը նաև լուրջ դժգոհության առիթ հանդիսացավ հասարակ քաղաքացիների շրջանում:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ СПЕЦИАЛЬНЫХ УСЛУГ США ПРОТИВ
АЛЬ-КАЙДЫ С СЕНТЯБРЯ 2001 ДО 2002 ГОДУ**

Арутюн Матевосян

(Резюме)

После террористических атак в сентябре 2001 г. американская позиция изменилась и стала более жесткой. Военные действия начались в местах, где можно было найти бен Ладена. Однако эти попытки не увенчались успехом, поскольку американские власти стремились уничтожить только бен Ладена, который потерпел неудачу. Им не удалось остановить расширение сетей «Аль-Каиды» в Европе и во всем мире, так как резко возрос потенциал терроризма. Военным не удалось ликвидировать «Аль-Каиду» как террористическую организацию, что в будущем приведет к новым терактам. Таким образом, новая политика властей США не увенчалась успехом. И уже мы увидим последствия через несколько лет, когда активизируются различные террористические группы.

**ACTIVITIES OF US SPECIAL SERVICES AGAINST AL-QAEDA
FROM SEPTEMBER 2001 TO 2002**

Harutyun Matevosyan

(Summary)

After the terrorist attacks of September 2001, American policy changed and it became tougher. Military operations were launched in areas where bin Laden could be found. However, these attempts failed because the American authorities aimed to destroy only bin Laden. They have not been able to stop the expansion of al-Qaeda networks in Europe and around the world so the potential attacks has increased dramatically. The military failed to eliminate al-Qaeda as a terrorist organization, which would lead to new terrorist attacks in the future. Therefore, the new policy pursued by the US authorities did not succeed. And we will see the consequences in a few years, when various terrorist groups become active.